



ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ  
( Կապանի N 6 հիմն.դպրոց)

Զգտումների, տենչերի, անուրջների երփնաթույր դերձաններից հյուսված մի մտերմիկ աշխարհ է Կապանի N 6 հիմնական դպրոցը՝ այնքա՛ն տարբերվող գորշ իրականությունից :

Այստեղ մտացածին բյուրեղապակե դոյակներ են՝ լուսաշող, արևշատ: Այստեղ անելիք չունեն չարն ու նախանձը, գայթոմն ու ձախողումը : Այս հրաշակերտ դոյակի պահապաններն են ներշնչանքն ու լավատեսությունը: Այստեղ՝ մանուկների աշխարհում ամենքը երջանիկ են, բարի, ներդաշնակ հոգով: Թևածում է սերը, իշխում է գեղեցիկը, բարին հաղթում է չարին : Մեր դպրոցում ամեն ոք զբաղված է իր գործով՝ հավատարիմ՝ մարդկային ճակատագիր

**Կապանի N 6 հիմն.դպրոցի տնօրեն  
Մարինե Դավթյան**

կերտելու ամենավեհ առաքելությանը:

Մեր դպրոցում բոլորն իրենց ապահով ու երջանիկ են զգում, չարչարվում, բայց նաև վայելում են տաք երազների անոսր թևերի գորովագութ շոյանքը, իսկ ուսուցիչները մայրական զգվանքի նման հանում են մատաղ սերնդի հոգիների փշերը և դրանով իրենց լավ են զգում :

Դպրոցն ունի կեսդարյա պատմություն : Սկզբում ուսուցումն իրականացվել է բնակելի շենքի I հարկում, ապա ներկայիս բժշկական քոլեջի շենքում: 1978թ-ին շահագործվել է ներկայիս դպրոցական շենքը՝ 4 մասնաշենքով, մեծ ու լուսավոր դասասենյակներով: Այն տիպային շենք է՝ նախատեսված 1176 աշակերտի համար :

2009թ-ից դպրոցը վերակազմավորվել է հիմնականի , որտեղ սովորում է 440 աշակերտ :

Դպրոցն իր գործունեության ընթացքում ունեցել է հմուտ և վաստակաշատ տնօրեններ՝ Շուշիկ Աբրահամյան , Մերյոժա Բալասանյան, Արտաշես Գրիգորյան , Աղամիր Աղամիրյան , Տիգրան Թևանյան, Ժորա Մնացականյան , Լեռնիկ Պետրոսյան , Բորիկ Խաչատրյան, 2009թ-ից՝ Մարինե Դավթյան: Բոլոր տնօրենների օրոք դպրոցը վերելք է ապրել , քանի որ ունեցել է լավագույն մանկավարժներ: Մեր սաները միշտ էլ փայլել են սպորտի, գիտության և տարբեր բնագավառներում :

Դպրոցն ունի Արցախյան ազատամարտում հերոսաբար զոհված 12 շրջանավարտ, որոնց հիշատակին դպրոցում փառքի սրահ է ստեղծվել, իսկ նրանցից յուրաքանչյուրի անունով անվանակոչվել են դասարանները : Անվանակոչված դասարաններում առանձնացվել են տվյալ հերոսի նստարանն ու սեղանը (ասենք՝ Արմեն Հայրապետյանի նստարան ) և օրվա օրինակելի աշակերտին պատիվ է տրվում նստելու հերոսի աթոռին :

Պարտադիր միջոցառումներ են կազմակերպվում զոհված ազատամարտիկների ծննդյան, մահվան օրերին, այցելություն Բաղաբուրջի հուշահամալիր և տղաների ծնողներին : 2014թ. նոյեմբերի 18-ը կարմիր տառերով գրվեց դպրոցի պատմության մեջ. ՀՀ ԿԳ, Պաշտպանության նախարարությունների և Երկրապահ կամավորական միություն՝ ՀԿ-ի կողմից կնքված եռակողմ փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ մեր դպրոցում ստեղծվեց Պատանի երկրապահ ակումբը , որի նպատակն էր խթանել սովորողների

հայրենասիրական դաստիարակությունը: Այն գործում է շատ ակտիվ, և սովորողները մեծ սիրով են անդամագրվում ակումբի շարքերում:

Ավանդույթ է դարձել աշխորհրդի և Պատանի երկրապահ-ի ջանքերով սանիտարական օրեր կազմակերպել Բաղաբուրջի հուշահամալիրում, որը ևս նպաստում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Դպրոցում ակտիվ գործում է աշակերտական խորհուրդը, որի կազմած ծրագրերով այսօր ստեղծվել է ռադիոհանգույց, որով հնչում են աշակերտական հաղորդումներ ուսման որակի, հիշարժան օրերի, դպրոցական առօրյայի վերաբերյալ: Հրատարակվում է, Պատանի երկրապահ և VI հրաշալիք ամսաթերթը, որտեղ պարբերաբար լուսաբանվում է դպրոցի առօրյան:

I – IV դասարանցիներին տրվում է ամենօրյա անվճար տաք սնունդ՝ Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում: Դպրոցի խորհրդի ծրագրով ստեղծել ենք <<Կանաչ դասարան >> կանաչապատ տարածքում, որտեղ անց են կացվում գրականության, կերպարվեստի և այլ դասաժամեր, ինչպես նաև դասամիջոցներին այն ծառայում է որպես հանգստի գոտի: Դպրոցում ստեղծվել է նաև կենդանաբանական անկյուն՝ ձկներ, դեղձանիկներ, թուրակներ, մկներ, ծովախոզուկներ, կրիաներ. Այն երեխաների համար ծառայում է որպես և՛ հանգստի, և՛ զվարճանքի գոտի:

Դպրոցում ակտիվ գործում է նաև ծնողական խորհուրդը, և շատ ծրագրեր իրագործվում են ծնողական խորհրդի ջանքերով:

Դպրոցի ծրագրերի իրականացմանը աջակցում են լավագույն բարեկամներ՝ Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատը, Կապանի լեռնահարստացման կոմբինատը, դպրոցի շրջանավարտներ գործարար Ա. Գասպարյանը, Վ. Մկրտչյանը, Մ. Միքայելյանը, Դ. Աբգարյանը, Է. Հարությունյանը:

Ռազմահայրենասիրական բոլոր միջոցառումներին աջակցում է ծնունդով կապանցի դատավոր Ա. Օհանյանը, ով նաև հերոս Արմեն Հայրապետյանի մանկության ընկերն է:

Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 10-ին ավանդույթ է դարձել դպրոցում հայտարարել << Հիշատակի օր >>՝ նվիրված դպրոցի շրջանավարտ, Արցախյան ազատամարտի հերոս, <<Մարտական խաչ >> 1-ին աստիճանի շքանշանակիր Արմեն Վաղարշակի Հայրապետյանին: Այդ օրը կազմակերպվում են բաց դասեր, ռադիոհաղորդումներ, շարադրության և ստեղծագործական մրցույթներ, այց հուշահամալիր: Այդ օրը դպրոցի ճաշարանը բոլոր սովորողների համար գործում է անվճար...

2013թ. սեպտեմբերի 1-ը նշանավորվեց հրաշալիքով: Հերոս Արմեն Հայրապետյանի կիսանդրին դպրոցին նվիրեց ուկրաինաբնակ մեծ քանդակագործ, մեր հայրենակից Գառնիկ Խաչատրյանը: Կիսանդրու բացումը կազմակերպվեց դեկտեմբերի 10-ին՝ մեծ հանդիսավորությամբ: Այն տեղադրված է դպրոցի նախաշեմին՝ աջից՝ Խուստուփ լեռը, ձախից՝ մեծ հերոս Գարեգին Նժդեհը: Դպրոցի յուրաքանչյուր լուսաբաց սկսվում է փառքի սրահի ծաղկադրումով և հերոսի կիսանդրու առաջ երդումով՝ <<Խոստանում ենք լինել քո արժանի հետևորդը >> խորագրով:

Ահա այսպես են սկսվում և ավարտվում մեր արշավույսները, որոնք այնքա՛ն խաղաղ են՝ շնորհիվ դպրոցի պահապան հրեշտակների՝ զոհված ազատամարտիկներ՝ Արմեն Հայրապետյանի, Մարտիրոս Հայրապետյանի, Արթուր հավհաննիսյանի, Մերոբ Ավագյանի, Վահան Դավթյանի, Վահրամ Մարտիրոսյանի, Մոս Բաբայանի, Յուրի Արզումանյանի, Հարություն Բալայանի, Գագիկ Ալավերդյանի, Անդրանիկ Ոսկանյանի, Նորայր Հակոբյանի:

Փա՛ռք ու պատիվ նրանց ...

